№ 231 ԿԻՐԱԿԻ, 10 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1918
ՔԱՌԱՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 10 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 231

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Նոյեմբերի 1-ից մինչև դեկտ. 1 ը Թիֆլիսում 10 ռուբլի։
Առանձին համարները Թիֆլիսում և գաւառներում 50 կ., երկաթուղային կայարաններում 70 կոպ.։

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Tiflis, Rédaction «Mschak»
Соломоновская, 21.

Խմբագրատան տելեֆոն № 2—68

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3 (բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն տեղ։
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 70 40 կոպ.։

Հասցէն փոխելու համար պիտի ուղարկել թէ հին հասցէն և թէ 1 ռուբլի։

Մկրտիչ և Գրիգորիա, Սիրանույշ, Սուրէն, Լեոն, Գուրգէն և Մաթինեկ Եանդեանները խորին կսկիծով յայտնում են ազգականներին և բարեկամներին՝ առանց Ջին երկուսն իրանց Թանդարանն ուղու, իսկ միւսներն իրանց սիրելի եղբօր՝

ՅԱԿՈԲ ՄԿՐՏՉԵԱՆ ԵԱՆԸԳԵԱՆԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ կարճատև և ծանր հիւանդութիւնից յետոյ ուրբաթ, նոյեմ. 8-ին։ Յուղարկաւորութիւնը այսօր, կիրակի, ամսոյ 10-ին, առաւ. ժամը 10½-ին հանգուցեալի բնակարանից (Мухранская ул. Текенамскій пер. № 6) դէպի ս. Նշան եկեղեցին։ Թաղումը Խոջիվանքի գերեզմանատանը։
2—2

Վասիլի Թոստանեան Աւանեանց իր որդի Բօման Վասիլիի և հարս Թամարա Պետրոսեանի հետ միասին խորին վշտով յայտնում են ազգականներին ու ծանօթներին՝ առ-Ջին իր Թանդարձին ամուսնու, երկրորդն իր ամուսնալի մօր, իսկ միւսներին՝ առ-Ջին իր սիրելի սկեսրոջ

Մարիամ Աւետիքեան Ադամեանցի

մահը, որ տեղի ունեցաւ ուրբաթ, նոյեմբերի 8-ին։ Յուղարկաւորութիւնը երեքշաբթի, նոյեմբերի 12 ին, առաւ. ժամը 10-ին ընակարանից (Բեթլեհեմեան № 2, Хлѣбная ул.) դէպի Բեթղեհէմի ս. Աստուածածնի եկեղեցին։ Հոգեհանգիստը ամեն օր, երեկոյեան ժամը 6-ին։ Թաղումը Խոջիվանքի գերեզմանատանը։
1030. 2—1
(ե.)

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ
Երկուշաբթի, նոյեմբերի 11-ին 1918 թ.
Կը ներկայացնէ
ՍԷՆԿԵՎԻՉԻ
ՅՈ ԵՐԹԱՍ
Դրաման 6 արար., թարգմ. Լ. Բաբայեանի։
Տեղերի գները սովորական են։
Սկիզբը երեկ. ճիշդ ժամը 7-ին։
Կասսան բաց է ամեն օր ժամը 12—3 ը և 6—8 ը։
Բեժիսսէօրական խորհուրդ
Հայ Դրամատիկ Դերասանների Միութեան Խորհուրդ
1028. 1—1
առ

Այսօր, կիրակի, Նոյեմբերի 10 ին, առաւ. ժամը 11 ին Ш տղայոց գիմնազիայի դահլիճում (մուտքը Վելիամինովսկիյ) նշանակված է

Հայ Ժողովրդական Կուսակցութեան
Ш, IV և V թաղամասերի անդամների և համակրողների ժողովը.

Օրակարգն է
1) Թաղային կօմիտէի ընտրութիւնը։
2) Զեկուցումներ. Մ. Ն. Ադաբէգեան՝ Բագուի դէպքերի, Ի. Թ. Ամիրեան՝ ներկայ ժամանակի մասին, Ա. Պ. Բարխուդարեան՝ ընթացիկ հարցերի մասին։
1023. 2—2
առ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(ԶՈՒՐԼՈՎԻ ԱՆՈՒՆՈՎ)
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿ ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆԸ
Այսօր, կիրակի, Նոյեմբերի 10 ին
Կը ներկայացնէ
Հ. ՄԵՆԿԵՎԻՉԻ
ՅՈ ԵՐԹԱՍ
Դրաման 5 գործ. թարգմ. Լ. Բաբայեանի։
Մասնակցում են՝ տ. տ. Մանուչարեան, Վանեցեան, օր. օր. Հայրուհի, Զաուշեան, պ. պ. Ադաբաբեան, Արամ, Գալաստեան, Գաւրոշ, Գէորգեան, Դիմաքսեան, Ժամկոչեան, Ղուշչեան, Մարութեան, Մութաֆեան, Միրզոյեան Գր., Յովհաննիսեան Լ. Քարտաշեան և այլք։
Սկիզբը երեկ. ճիշդ ժամը 7-ին
Տեղերի գները 50 կ. մինչև 3 ռ.։
Հերթ. բեժիսսէօր՝ ՔԱԼԱՆԹԱՐ Լ.
Գիշերուան ժամի դէպ՝ Եղուբեան Ի.
Սցենարիստ՝ Մալխասեան Գ.
Ցուշարար՝ Ադաբաբեան Կ.
Վարչութեան հերթ. անդամներ՝
Նազարէթեան Ա., Սերժ
1027. 1—1

ԲԺԻՇԿ
Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆ
Նախկին ասիստենտ Բերլինի համալսարանի կլինիկաների
Մասնագէտ մանկաբարձութեան, կանանց հիւանդութիւնների, նրանց միզասեռական և վեներականախտերի («606» և «914»), էլեքտրաբուժումն արգանդի և ձուարանների խրոնիկական բորբոքումների։ Ամեն օր, երեկ. ժամը 5—7-ը, կիրակի օրերը առաւ. ժ. 10—11-ը։ Հասցէն՝ Օլդինեան փողոց, Մելիք Ադարբանի տուն, № 3, քն. 12, հեռախօս № 16—71։
առ. (ե.հ.ջ.կ.) 100—30

ԱՍԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ
Մ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆԻ
Ոսկեայ և պատիւի առաջին, արհեստական առաջին՝ ֆարֆորից և ռեզինից (առանց քիմքի), վինտով առաջին և այլն։
Ընդունելութիւնը՝ ցեր. 10—2-ը ժ.
Երեկոյեան 4—6 ժ.
Կիրակի օրերը 10—12 ժ.։
Լերմոնտովսկայա փողոց № 1, մուտքը Աբաս Աբադէի պէրէուլօկ՝ց։
առ. 835. 100—18

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլիսներ. հիւ. կլինիկայի, ընդունում է յատկապէս միզասեռ., վենեռական և սիֆիլիս հիւանդութիւն ունեցողներին։
Առաւօտ. ժամը 10—12.
Երեկ. » 5—7.
Սեմենովսկայա փ. 18 (Վլադիմիրսկայի անկեան մօտ։ Բնակարանը Սեմենովսկայա, 16։
առ. (ե. հ. ջ. կ.) 100—23

ԲԺԻՇԿ
ԳՐ. Յ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ
Նախկին ասիստենտ Ժընեվի համալսարանի կլինիկաների և պրոֆ. Oltramare ի վեներական հիւանդութիւնների սասնագիտական բուժարանի։
Ներքին և կանանց հիւանդութիւններ. մասնագէտ վեներական, միզասեռական և կաշի ցաւերի։ Հին ու նոր տիպեր և նրա կոմպլիկացիաները. ներարկումն պրոֆ. Ehrlich-ի «606»-ի և «914»-ի պրեպարատներով։ Էլեքտրաբուժում։
Ընդունելութիւնն առ. ժ. 10—12-ը, երեկ. 5—7-ը. կանանց համար 12—1 ը։
Կիրակի օրերը ՝ ն ընդունելութիւն ցեր. ժ. 11—12-ը։
Կիրօչնայա փ. № 11.
առ. 709. 100—47

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Նախկին ասիստենտ Բերլինի և Մոսկվայի համալսարանների կլինիկաների. մասնագէտ ներքին հիւանդութիւնների—թոքախտի և սրտի. ընդունելութիւնը՝ իր բնակարանում և լոյսի ու էլեկտրաբուժական կաբինետում։ Հետազօտութիւնը և բժշկութիւնը X ճառագայթներով։
Ամեն օր՝ 9—1 և 5—8 ժամը երեկ.։
Բերեզովսկայա փ., № 23. Հեռ. 7—92.
առ. (ա. օ.) 100—39

ԲԺԻՇԿ
Կ. Յ. ՂԱՋԱՆՃԵԱՆ
Ներքին և հրեխայոց հիւանդութիւններ։
Ընդունում է ամեն օր առաւ. ժ. 10—12-ը, երեկ. ժ. 5—7 ը, Աբաս-Աբադակի պերեուլօկ № 7։
առ. (ա. օ.) 877 100—30

ԲԺԻՇԿ
Մ. Կ. ՎԱՆՑԵԱՆ
Ներքին եւ ջղային հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր՝ 12—1-ը ցեր, 6—7 երեկոյեան։ Շաբաթ օրերը ձրի ընդունելութիւն չքաւորների համար։
Абасъ-Абадская пл. д № 1.
առ. (ա. օ.) 976. 100—13

Բացված է
ԱԶՔ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲՈՒԺԱՐԱՆ
Մշտական ժամեակարգներով
ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. ԴՕՆԽԻՆԻ
Նախկին երեքարժամանակեայ ասիստենտ Գարեգին և Վիեննայի համալսարանների աչքի հիւանդութիւնների պրոֆեսորների. ընդունում է
Աչքի հիւանդութիւններ
ունեցողներին ցերեկվայ ժամը 9-ից մինչև 11½-ը և երեկ. 4—7½-ը. Միքայէլեան փող. 141 («Աւօղլոյին» մօտիկ)։ Մանր և միջոց. կարգ հիւանդները ընդունվում են լրիւ պանսիոնով։
առ. (ա. օ.) 849. 100—29

ԲԺԻՇԿ
Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։
Հիւանդների համար անհրաժեշտ անալիզները կատարվում են ԶԵՐԻԱԳԻՍ.
Ընդունելութիւնը եր. ժ. 3½—7
Հասցէ՝ Бебутовская, № 56.
առ. (օ. ժ.) 504. 100—51

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Սիֆիլիս (ներսրսկ. «914»), վենեռական, միզասեռական և կաշի հիւանդութիւններ. էլեքտրաբուժում. հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, ժամը 12—2 ը, 5—6-ը։ Կանանց համար ժամը 2—3 ը ցերեկվայ։
Հասցէն՝ Սօլօլակ, Բէրուսովսկայա փող. № 33 (անկիւն Պասիեվիչի փող.)։
Հեռախօս 11—75.
առ. (հ. կ.) 1395 100—91

ԲԺԻՇԿ
Վ. Կ. Մարգարեան
Ներքին և ջղային հիւանդութիւններ. Բժշկութիւն և դասախօսութիւն յատկապէս միզասեռ., վենեռական և սիֆիլիս հիւանդութիւն ունեցողներին։
Ընդունում ամեն օր՝
առաւ. ժամը 9—11-ը
երեկ. ժամը 5—7 ը
Абасъ-Абадская пл. уголъ Могилевск. ул. № 3,
առ. (հ. հ. կ.) 757. 30—27

ԱՅՍՕՐՎԱՅ ԿՕՆՖԵՐԱՆՍԸ

Այսօր, ամսոյ 10-ին, Թիֆլիսում պիտի տեղի ունենայ Վրաստանի կառավարութեան նախաձեռնութեամբ հրաւիրված կոնֆերանսը, բաղկացած անդրկովկասեան երեք հանրապետութիւնների և Հիւսիսային Կովկասի լեռնականների ներկայացուցիչներից։

Կոնֆերանսի նպատակն է քննել մի քանի վիճելի խնդիրներ մեր երկրի վերաբերմամբ գալ որոշ համաձայնութեան և գտնել մի ընդհանուր լեզու առաջիկայ հաժաշխարհային կոնգրեսում խօսելու համար, եթէ, հարկաւ, մեր երկրին ևս վիճակվելու է արիւնի մասնակցութիւն ունենալ այդ կոնգրէսում։

Որքան ևս թերի լինի Վրաստանի կառավարութեան հրաւիրած կոնֆերանսի ծրագիրը, այնու ամենայնիւ այն չորս կէտերը, որոնցից բաղկացած է այդ ծրագիրը, իր ընդհանուր բովանդակութեամբ շօշափում է կովկասեան ազգութիւնների գրեթէ բոլոր շահերը։ Ամենագլխաւորը ընդերներից՝ երեք պետութիւնների փոխադարձ յարաբերութիւնն է, որից և գլխաւորապէս կախված է մեր երկրի ժողովուրդ և հեռաւոր ապագան և երեք պետութիւնների գոյութիւնը։

Գաղտնիք չէ, որ ներկայումս այդ յարաբերութիւնը շատ և շատ հեռու է բարեկամական լինելուց։ Նա նոյն իսկ թշնամական է Հայկական Հանրապետութեան և Ադրբէջանի Հանրապետութեան մէջ։ Եւ իրերի այժմեան քաղաքային վիճակից ստիպողը գլխաւորապէս հայերն են։ Հետևաբար հայերի համար է, որ այսօրվայ կոնֆերանսն ստանում է առանձին նշանակութիւն։

Ես չը գիտեմ՝ ինչ հրահանգով են ներկայանալու հայկական կառավարութեան պատգամաւորները այդ կոնֆերանսին։ Գիտեմ միայն, որ, ինչ էլ որ լինի այդ հրահանգը, հայ պատգամաւորները խորապէս վշտացած հոգով և չարաչար վիրաւորված զգացումներով են գնալու այնտեղ։ Նրանք չեն կարող մոռանալ և չը պիտի մոռանան ոչ Ադրբէջանի բարբարոսութիւնները թաթարների և ոչ Վրաստանի կառավարութեան ոչ մարդասիրական վերաբերմունքը դէպի հայ գաղթականութիւնը Վրաստանի սահմաններում։ Հասկանալի է, որ վշտացած հոգին և վիրաւորված զգացումները չեն կարող գործածել հանգիստ լեզու, և հաւանական է, որ այսօրվայ կոնֆերանսին վիճակված է շատ դաժան ճշմարտութիւններ լսել հայի բերանից։ Արդ, կոնֆերանսի ոչ հայ անդամների համակրութիւնից ու տակտից է կախված այդ միջազգային համագումարը չը դարձնել նորանոր վէճերի և երկպառակութիւնների ասպարէզ։ Նոյն համբերութիւնն ու տակտը պիտի ունենան և հայ պատգամաւորները, եթէ նրանց ես վիճակված է լսել դառն ճշմարտութիւններ։

Առ հասարակ կոնֆերանսի անդամների փոխադարձ հանդիպումը մի միջոց, որ կարող է ծառայել իրրև ապահով հիմք կանոնաւոր և խելացի խորհրդակցութեան։ Լեզուները պարտաւոր են խօսել այն, ինչ որ թաքնված է սրտերում։ Կուտակված թոյնը պէտք է ելք դտնէ և վշտացած սրտերը պէտք է ստանան դէթ բարոյական բաւարարութիւն։ Այլապէս կոնֆերանսը ոչ մի արժէք և ոչ մի արդիւնք չի կարող ունենալ։ Նա մի զուարճալի հանդիսարան չէ, ուր հրաւիրվածները կոչված են իրարու հաճոյախօսութիւններ անելու։ Նա մի տեսակ զատարան է, ուր պիտի քննվեն և վերլուծվեն բոլոր զգուութիւնները, որ տեղի են ունեցել և ունեն այժմ իսկ երեք պետութիւնների, հետևաբար և երեք ազգերի մէջ։

Հայ պատգամաւորները կը կեղծեն ու կը ստեն, եթէ չասեն ամենայն պարզութեամբ, որ հայ ազգը իր հարևաններից վիրաւորված է մինչև իր հոգու յատակը։ Նրանք պիտի ասեն ամենայն անկեղծութեամբ և առանց քաղաքագիտական էկիվոկների, որ հայ ժողովուրդը այն ժամանակ միայն կարող է հաւատալ իր հարևաններին և անկեղծ բարեկամութեան ձեռք մեկնել նրանց, երբ ստանայ հաստատ գրաւական, որ այսուհետև նրան չեն վշտացնի ու չեն վիրաւորի, ինչպէս վշտացնում ու վիրաւորում են այժմ։ Նա չի կարող բարեկամաբար սեղմել այն ձեռը, որ պատռաստ է ամեն վայրկեան յարմար դէպքում գաշոյնը խրել իր մէջքը։ Առանց այդ դրաւականի՝ հայ ժողովրդի հանապարհն անելանելի է ու դատ։

Մի նիւթ կայ, որի մասին հայ պատգամաւորները չը պիտի համաձայնվեն, որ որևէ խօսակցութիւն կամ վիճաբանութիւն լինի կոնֆերանսում։ Դա «Հայկական Խնդիրն» է, մեր քառասնամեայ տառապանքների արդիւնքը և հարիւր հազարաւոր զոհերի արնագիները։ Այդ խնդիրը ոչ մի առնչութիւն և ոչ մի կապ չունի կովկասեան խնդիրների, հետևաբար և այսօրվայ կոնֆերանսի հետ։

Հայկական Խնդիրը միջազգային է և նրա այս կամ այն լուծումը կախված է ժամանակ և միմիայն առաջիկայ համաշխարհային կոնգրեսից։

Շիրվանզադէ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Կ. Բաստանի Հեռագրական Գործ. միջոցով)

ՎԻԼՍՕՆԻ ՊԱՇՏՕՆԱԳԻՐԸ

(Բոլշեվիկեան ժամուի թերթի միջոցով Մոսկվայից, 8 նոյեմբ.)

ԼՕՆԴՕՆ, 8 նոյեմբ.—Վիլսոնը ուղարկել է գերմանական կառավարութեանը մի պատասխանագիր, որի մէջ հաղորդում է դաշնակից պետութիւնների պատասխանը Գերմանիայի հաշտութեան առաջարկութեանը։

Այդ պատասխանը հետևեալն է.

Դաշնակից կառավարութիւնները ուրախութեամբ ծանօթացան Միացեալ Պետութիւնների նախագահի և գերմանական կառավարութեան միջև տեղի ունեցած դրագրութեանը։

Նրանք յայտնում են, թէ համաձայն են հաշտութիւն կնքել գերմանական կառավարութեան հետ նախագահի առաջադրած պայմաններով։ Սակայն նրանք հարկ են համարում ծանանցնել, թէ ծովերի ազատութեան հարցին վերաբերեալ երկրորդ յոդուածը ենթարկվել է զանազան մեկնութիւնների, որոնցից մի քանիսը նրանք չեն կարող ընդունել։ Նրանք այդ պատճառով պէտք է իրանց իրաւունք վերապահեն ազատօրէն մեկնելու այդ հարցը, երբ նրանք կը ներկայանան հաշտութեան վեհաժողովին։

Ապա կոնգրէսին ուղղված դրութեան մէջ պարունակվող պայմանների մէջ նախագահը յայտնել էր, թէ նուաճված հողագործիները զէնք է վերականգնվեն ու ազատվեն գերման զօրքերից։ Դաշնակից կառավարութիւնները կարծում են, թէ ոչ մի կասկած չէ կարող լինել այդ տեսակէտից, նաև նրա նկատմամբ, ինչ պարփակում է իր մէջ այդ որոշումը։ Նրանք հասկանում են այդ այն մտքով, թէ Գերմանիան պէտք է հատուցանէ զաշնակիցների քաղաքացի ազգականութեանն այն վնասները, որ պատճառեցին գերման զօրքերը ցամաքի վրա, ծովում և օդում։

Վերջում պաշտօնագրի մէջ ասված է, թէ Վիլսոնը համաձայն է վերոյիշեալ ուղղութիւններին և թէ մարշալ Ֆոշը արդէն թոյլատրութիւն ունի Միացեալ Պետութիւնների կառավարութիւնից ընդունել գերմանական կառավարութեան լիազօր ներկայացուցիչներին, որպէս զի յայտնէ նրանց զինադադարի պայմանները։

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄՑԻ ԱՌԻԹՈՎ

ՊԱՐԻԶ, 8 նոյեմբ.—Մարշալ Ֆոշը հաղորդում է այն տեղեկութիւնը, թէ գերմանական պատգամաւորութիւնը կանցնի զօրագիծը երեկոյեան ժամը 10-ին Գուզբուայից ոչ հեռու։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

ԲԵՐԼԻՆ.—Զինուորական մինիստրը կարգադրել է, որպէսզի կռիւներին չը մասնակցող զինուորները անմիջապէս հայրենիք վերադարձվեն։

Բաւարական զինուորական մինիստրը հանդիսացնում է ժողովրդին, թէ Աւստրիային տուաջարկված զինադադարի պայմանները թէև հնարաւորութիւն են տալիս հակառակորդին սպառնալ Բաւարիային, բայց առ այժմ այդպիսի անմիջական վտանգ հարաւից և արևելքից չը կայ։

ՊՐԱԳԱ.—Զեխական աղբիւրներից տեղեկացնում են, թէ Կրասարժը Շվեյցարիայից բերել է համաձայնագիր, թէ Բոհեմիան պէտք է անթափանցիկօրէն յանձնվի չեխ ոստիկան պետութեանը։

ՇՏՈՒՏԳԱՐՏ.—Մինիստրութիւնը հրաժարական տուեց։

ՕԼԴԷՆԲՈՒՐԳ.—Լանդտագը վճռեց պահանջել պատասխանատու մինիստրութիւն։

ԲՐԵՄԷՆ.—Վճռվեց սահմանել ոստիկանների համար առհասարակ ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ընտրողական իրաւունք։

ԲՕԼՇԵՎԻԿԵԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԲԻՒՐՕ ՄՕՍԿՎԱՅԻՑ

ԿԻԵՎ, 6 նոյեմբ.—Կիեվ-Վիէննա երկաթուղային ուղղակի հաղորդակցութիւնը խզվել է։

ՍՕԼՆՑԵՎՕ, 8 նոյեմբ.—Երեկ Գրեթորովկա կայարանով անցան աւստրիական զե-

բիներ 46 վագոններով։ Ուկրայնան վերադարձրեց գերիներին Կուրսկ։

ՄՈՍԿՎԱ, 8 նոյեմբերի.—Հոկտեմբերեան յեղափոխութեան տարեդարձի տօնակատարութիւնը պրոֆեսօնիալ միութիւնների ձեռքով ընդունեց մեծ չափեր։ Պրոֆեսմիութիւնների համառուսական կենտրոնական խորհրդի նիստում հանդէս եկաւ Լենինը, որին ընդունեցին ողջոյնի ծափահարութեամբ։

Երէկ Մոսկվայում բացվեցին Մարքսի և Էնգելսի արձանները Լենինի ներկայութեամբ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Երէկ Սմոլնիում կայացաւ խորհրդի հանդիսաւոր նիստը հոկտեմբերեան յեղափոխութեան տարեդարձի առիթով։ Խօսեցին Զինովիեվը, Լունաչարսկին և ուրիշ շատերը։

ՄՈՍԿՎԱ, 8 նոյեմ.—Խորհուրդների համագումարի երկրորդ նիստում հանդէս եկաւ Լենինը միջազգային դրութեան մասին։

ՊԱՏԵՐԱԶՄ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԵՐԼԻՆ, 8 նոյեմբ.—Արեւմտեան զօրաբանակատ։ Ֆրանսիացիք, որոնք ամրացել էին Շելդայի արեւելեան ափում, նորից եւ մղվեցին դեպի միւս ափը։

Շելդայի և Մեուզայի միջև մենք շարունակեցինք մեր նահանջը ունեցած պլանների համաձայն։ Վերջապահ կուխները զարգացան մեր նոր զօրագծերի առաջ։ Կռիւները ստացան լայն չափեր Վալենսիէն-Մօնս-Սամբրէից հարաւ, Ավէսնից հիւսիս և Սէդանից հարաւ-արեւմուտք։ Կռիւները ամենուրեք վերջացան թշնամու նահանջով։ (Երեկոյեան)։ Զօրաճակատների վրա լռութիւն է։

ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԵԾ ԱՐՇԱՒԱՆՔԸ

(Բոլշ. ժամուլի բիւրօ)

Արեւմտեան զօրաճակատ։ Դաշնակիցները պաշտօնապէս հաղորդում են, թէ նոյեմբերի 8-ին ամբողջ օրը շարունակվեց արշաւանքը։ Ֆրանսիացիք առաջացան 10 կիլոմետր, ամերիկացիք՝ 40 կիլոմետր։ Վերջինները վերցրել են 6000 գերի ու ձեռք են ձգել պատերազմական հարուստ աւար։ Թշնամին ցոյց էր տալիս կատաղի դիմադրութիւն։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊՕՍՏ ՀԵՌԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

Հայոց կառավարութիւնը պատրաստակամութիւն է յայտնել վրաց կառավարութեան առաջարկին՝ պօստ-հեռագրութեան համաձայնութիւն կնքելու և այդ մասին վրաց կառավարական հիմնարկութիւնների հետ բանակցութիւնները վարելու գործը յանձնված է Հայաստանի պօստ-հեռագրութեան վարչութեան պետ Ն. Ա. Բոյնովսկիին։

ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ ԵՐԿԻՒՂԻՑ

Գերմանական միսիայի տեղեկութեանց համաձայն, գերմանական զօրքերը Փօթիից վերադարձել են անգլիացիների երկիւղից, թէ նրանք կարող են այսօր կամ վաղը Սև ծովը մտնել և ջրասուզել իրանց զինուորական նաւերը։

ԲԱԹՈՒՄՈՒՄ

Բաթումից եկող մի անձն հաղորդում է, որ թիւրքերը բոլորովին հեռացել են քաղաքից։ Նրանք, ի միջի այլոց, քանդել են բերդի ամրութիւններից մի քանիսը։

Քաղաքում կեանքը նորմալ է։ Համեմատաբար էժանութիւն է տիրում։ Սև հացի ֆունտը ծախվում է 1 ր., սպիտակը 3 ր.։ Առատ ձնապէս առատ է միրգը։

ԴԱՐԴԱՆԵԼԻ ԲԱՑՈՒՄԸ

Հեռագրական տեղեկութիւնների համաձայն, Ամերիկան Թիւրքիայից պահանջել է անմիջապէս բանալ Դարդանելը ի կատարումն հաշտութեան պայմանագրի։ Դրանով դաշնակիցների համար ջրային ճանապարհ է բացվում դէպի Ուկրայնա։ Խօսվում է, որ այդ ծրագրել է Ֆրանսիան, որը յոյս ունի Ուկրայնա մտնել և փրկել այնտեղ ունեցած իր մեծ գումարները, որ հասնում է 14 միլիարդի։

Թիֆլիսում ստացված վերջին բաղիօլի համաձայն, դաշնակիցների նաւատորմը արդէն անցնում է Դարդանելը։

ԹԱՒՐԻԶԸ ԴՈՏԱՐԿՎԱԾ

Հաստատ տեղեկութեանց համաձայն, թիւրքերը բոլորովին հեռացել են Թաւրիզից։ Անգլիական շտաբը եկել է քաղաք։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տ. ԴԱՐԻԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Այսօր, կիրակի, հողին է յանձնվում «Արձագանքի» հանգուցեալ խմբագիր Աբգար Յովհաննիսեանի այրի Դարիա Յովհաննիսեանի (Ծնեալն Հախվերդեան) դիակը։ Հանգուցեալը մէկն էր ժամանակակից եւրոպական հոգով կրթված հայուհիներից։ Նա տիրում էր եւրոպական մի քանի լեզուների։ Մի ժամանակ նրա հարուստ տունը ծառայում էր իբրև գրական սալոն, ուր ժողովվում էին շաբաթական մի անգամ յայտնի հայ գրողներն ու հասարակական գործիչները, և տանտիրուհին յայտնի էր իր սիրալիր հիւրընկալութեամբ։ Իր զաւակների ու ամուսնու մահից յետոյ, Դարիա Յովհաննիսեանը հեռացել էր կեանքից և զբաղված էր բարեգործութեամբ։ Վերջերս, չը նայելով իր ծերութեանը, ջերմ ժամանակցութիւն ունէր գաղթական որբերին ծառայելու գործում Թիֆլիսի չորրորդ քաղաքամասում, ուր նա ստանձնել էր ձրի թէյատան կառավարչուհու պաշտօնը։ Ի յիշատակ հանգուցեալի նոյն քաղաքամասի սանիտարական հոգաբարձութիւնը վճռել է այսօր ձրի հաց բաժանել գաղթականներին Վելիամինովսկի փողոցում գտնվող ձրի թէյատանը։

ԹԻՖԼԻՍԸ ԵՒ ՇՐՋԱԿԱՑՔԸ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ

(Հրաման № 43 վրաց դեմօկրատական հանրապետութեան կառավարութեան)

Վրաց հանրապետութեան կառավարութիւնը յայտարարում է.

1) Զը նայած միլիցիպետի հրամանին՝ երեք օրվայ ընթացքում Թիֆլիսի ազգաբնակութեան զէնքերը յանձնելու մասին, զէնքերի յանձնումը տեղի չունեցաւ։ Մինչդեռ կառավարութեան ունեցած տեղեկութիւնների համաձայն, քաղաքում հրազէնների և պայթուցիկ նիւթերի ամբողջ պահեստներ կան։

2) Թիֆլիս քաղաքում և նրա շրջակայքում կատարվում է բիրանցի ու գրաւոր ագիտացիա ընդդէմ վրաց հանրապետութեան անկախութեան և նրա կառավարութեան ու սահմանված իրաւակարգի։

3) Կատարվել է ռազմագիտական տեսակէտից շատ կարեւոր կամրջի ոչնչացումն և, եղած տեղեկութիւնների համաձայն, գոյութիւն ունի դաւադրութիւն, որի նպատակն է ոչնչացնել ռազմանիւթերի կարեւոր պահեստներն ու պետական հաստատութիւնները։

4) 1-ին, 2-րդ և 3-րդ դէտերում յշատակված գործողութիւնները նկատելով արդիւնք առանձին անհատների և ամբողջ խմբակների յանցաւոր գործունէութեան, որ հետամուտ է առաջ բերել անիշխանութիւն, եղբայրասպան կոտորած ու հակայեղափոխական գործողութիւններ՝ օտարերկրեայ զինված միջամտութեան առիթ տալու նպատակով, վրաց դեմօկրատական հանրապետութեան կառավարութիւնը յայտարարում է Թիֆլիս քաղաքը և նրա շրջակայքը պատերազմական դրութեան մէջ։

Գեներալ նահանգապետ նշանակված է գեներալ Մազնիէվը, որին ենթարկվելու են Թիֆլիս քաղաքի բոլոր զինված ոյժերը, ինչպէս են կանոնաւոր զօրամասերը, ժողովրդական գվարդիան, միլիցիան և առանձին նահանգական գումարտակն ու այլ զօրախմբերը, որոնք գտնվում են Թիֆլիս քաղաքում։

Նրան է ենթարկված նաև երկաթուղագծերի շրջանը, սկսած Նաֆթլուղից մինչև Դիլիջան կիսակայարանը։

Հրամանը իր ոյժի մէջ մտաւ 1918 թ. նոյեմբերի 9-ի ժամը 12 ին։

Իսկականը ստորագրեց կառավարութեան նախագահ Ժորդանիա։

Իսկականի հետ ճիշդ է. գնդապետ Զիդլիխիա։

ՎՐԱՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԻՄՈՒՄԸ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԵՒ ԱԽԱԼՑԽԱՅԻ ԴԱՒ. ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ

Վրաց հանր. կառավարութիւնը, իրանից անկախ պատճառներով, մինչև այժմ հնարաւորութիւն չունեցաւ Ախալքալաքի և Ախալցխայի գաւառների ազգաբնակութեան կեանքը կարգաւորելու մասին հոգ տանել։ Այդ շրջանները, արտաքին ոյժով մի քանի ամիս շարունակ կորված լինելով Վրաստանից, նորից վերադարձվում են նրան, որովհետև Թիւրքաց կառավարութիւնից ստացած մեր տեղեկութիւնների համաձայն՝ այդ գաւառները մաքրվում են Թիւրքական զօրքերից։ Եւ այդպիսով, վրաց կառավարութիւնը այժմ արդէն հնարաւորութիւն է ձեռք բերում այդ գաւառների ազգաբնակութեանը օգնութեան հասնելու և մօտ ապագայում թեթեւացնելու նրա ծանր վիճակը։ Ուստի և վրաց հանր. կառավարութիւնը յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ ինքը այդ երկիրն է մտնում այն հաստատ վճռով, որ ազգաբնակութեան շրջանը մոցնի կարգ և խաղաղութիւն, որ նորմալ կեանքի և հանգիստ աշխատանքի ապահովութեան դրաւական է։

Սրա հետ միաժամանակ, նկատի առնելով որ եղած տեղեկութեանց համաձայն՝ մի քանի չարամիտ մարդկանց կողմից դիտաւորեալ կերպով տարածվում են կեղծ և զրպարտիչ լուրեր, թէ այդ գաւառների վրա վրաց կառավարութեան իշխանութիւնը տարածվելուն պէս իբր թէ խիստ պատիժ և հալածանքներ են սպասում մուսուլման ազգաբնակութեան, կառավարութիւնը կտրականապէս յայտարարում է, որ այդ բոլոր լուրերը չարամիտ մարդկանց չար զրպարտութիւններ են. ընդհակառակը, այդ աւերված վայրերի ազգաբնակութիւնը՝ առանց ազգի և կրօնի խտրութեան՝ վրաց կառավարութեան կողմից կը ստանայ ամենահոգատար և սրտագին վերաբերմունք դէպի իր կարիքները։

Վրաց կառավարութիւնը յոյս ունի, որ Ախալքալաքի և Ախալցխայի գաւառների ազգաբնակութիւնը, առանց ազգի խտրութեան, զգալով մոմենտի լրջութիւնը, կառավարութեան հետ սերտ գործակցելով, երեան կը բերի անհրաժեշտ հանգստութիւն և ամէն կերպ կաշակցի այդ գաւառների վերածնութեան և վերաշինութեան գործին մեր երիտասարդ պետութեան առանձնաբերում ժողովրդական հանրապետութեան եղբայրական միջամտութեան և գործակցութեան ակնկալութեամբ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

Վրաց կառավարութեան կարգադրութեամբ՝ խուզարկութեան ենթարկվեցին Հայաստանի կառավարութեան անդամ Խ. Կարճիկեանի և Հայաստանի խորհրդի անդամ Սա. Մաղիկեանեանի բնակարանները։

Կ. Գօլսի Թիֆլիս եկած լեռնականների պատուիրակութիւնը մեկնեց Բագու։

Թիֆլիս եկաւ Մոսկվայում յայտնի փաստաբան Հ. Ն. Մալիանովիչ։ Շուտով ռուսաց ազգ. խորհրդում նա զեկուցում է տալու Ռուսաստանի քաղաքական դրութեան մասին։

Լուրերի համաձայն, մօտ օրերս բաւականաչափ նաւթ կը ստացվի Թիֆլիսում։

Վրացական դիւանագիտ. միսսիան երէկ մեկնեց Բագու։

Ցայտնում են, որ Վրաստանի սահմաններում եղած աւստրիացիները Վրաստանում կարող են օգտվել միայն մսից, բայց միւս մթերքների համար նրանք պիտի վճարեն հատանելիքը։

Միլիցիապետ կարգադրութեամբ՝ ներքին գործերի մինիստրի կարգադրութիւնը չը կատարելու համար (զէնքը չը յանձնելու համար)՝ ձերբակալվեցին Բարնով, Ս. Գետաձէ, Վարմաձէ և բանտ դրվեցին 6 ամիս ժամանակով։

Ճանապարհ. հաղորդակցութեան մինիստրին հեռագրում են Բագուից, որ շուտով Թիֆլիս կուղարկվի Բագուում եղած վրացիների երկրորդ խումբը, թւով 300 հոգի. բայց որովհետև հարկաւոր քանակութեամբ վագոններ չը կան, ուստի Ադրբէջանի կառավարութիւնը առաջարկել է վրաց կառավարութեանը շտապով Թիֆլիսից ուղարկել 30 վագոն։

Նոյեմբերի 8-ին Թիֆլիս եկաւ հայկական գնացքը Երևանից։

Այսօր, նոյեմբերի 10-ին, Արհեստաւորաց Ակումբում կը կայանայ Թիֆլիսի օպէրէտային խմբի ներկայացումը, մասնակցութեամբ Ս. Թորոսեանի և Ս. Վարդենիսի։ Կը ներկայացնեն յայտնի օպէրետա «Սաղ Սմիրնօ» («Թիֆլիսի պաշտօնի գրաժդանին»)։

Երկուշաբթի, նոյեմբերի 11-ին, Հայ Դրամատիկ Դերասանների Միութեան խումբը կը ներկայացնէ Սենկեվիչի հռչակաւոր վէպից փոխադրված «Ցոմ երթաս» պիէսը։

ՄԱՄՈՒԼ

ԹԻՒՐՔԱՑ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

«Կ. Слово» ի մէջ տպված է.

Կ. Գօլսի «Վաքթ» լրագրի մէջ Ահմէդ-էֆենդի բէյը հոկտ. 13-ին, յիշեցնելով հայկական պատգամաւորութեան ներկայութեան մասին, այդ առիթով հետեւեալն է գրում.

«Ահա մի քանի ամիսներ են, ինչ հայկական նոր կառավարութեան պատգամաւորութիւնը գտնվում է Կ. Գօլսում։ Այդ պատգամաւորները, ընտրված երկրի ամենակրթված ու ինտելիգենտ ներկայացուցիչներից, անկասկած մեծ ազդեցութիւն ունեն իրանց հայրենակիցների մտքերի վրա։ Նրանց նպատակները շատ հասկաց են։ Նրանք ձգտում են միայն շտկել Բաթումի պայմանագրով սահմանված Հայաստանի սահմանները, որպիսին ստեղծված է ամբողջովին Ռուսաստանի հողաթափի վրա, և աւելացնել դրանց նոր պայմանագրով։ Այդ պատգամաւորները միշտ այն տեսակէտի վրա են եղել կանգնած, թէ Թիւրքահայերին վերաբերեալ հարցերը ամբողջովին վերաբերում են օսմանեան կառավարութեան իրաւասութեանը։

«Որ հայկական կառավարութիւնը ազդեցութիւն ունի հայերի վրա, մենք դրա ապացոյցը տեսանք։ Անդրանիկի ոյժերը ցիրուցան են եղած։ Բագուի հայերը հրաժարվեցին քաղաքի պաշտպանութիւնից։ Ազգային լրագիրները Բագուի անկումը բացատրում են հայերի այդպիսի վարմունքով։

«Այդպիսով, եթէ այդ պատգամաւորները, որոնց միշտ խոստացվել է հարցերի համեստ լուծումն, հայրենիք վերադառնան ձեռնունայն, մենք հնարաւորութիւն չենք ունենայ մեր նպատակը վախճանին հասցնել հայկական հարցի լուծումը։ Մինչդեռ, եթէ մենք հաճախմբութեան գանք հայկական կառավարութեան հետ և ստեղծենք բարեկամական յարաբերութիւններ նրա հետ, հաշտութեան բանակցութիւնների ժամանակ մենք իրաւունք կունենանք յայտնել նրանց, որոնք կը ցանկանան յենվել անդրեայի վրա։ ասել մեր հացերին գառն բաներ։

«—Ովքեր էք դուք։ Մենք արդէն յանդիմանեցինք համաձայնութեան հայերի հետ։ Անցեալը հետևանք էր կրօտաբեր քաղաքականութեան, որ երբէք համապատասխան չէր ժամանակի ոգուն։ Բայց ա դ ամենն անցել է արդէն և այժմ մենք և հայ կառավարութիւնը անկեղծ բարեկամներ ենք։ Այդ բարեկամութեան ապացոյցն այն պայմանագիրն է, որպիսին մենք ստորագրել ենք այդ կառավարութեան հետ։

«Անհրաժեշտ յայտնեցք կը լինի բաց թողնել այդպիսի գեղեցիկ առիթը այդ հարցի նպաստաւոր լուծման համար։ Հակառակ դէպքում՝ այդ հարցը հաշտութեան կոնգրէսում կը ստանայ մեր ազգային ինքնավարութեան համար շատ անհաճելի ուղղութիւն»։

ԿԵԱՆՔԸ ԳԱՒԱՌՈՒՄ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌՈՒՄ

Լաղօղաղ, 20 հոկտեմբերի

Ամիս 16-ին, հինգշաբթի օր, տեղս ժամանեց Թէլաւից գեր. Պիրոս եպիսկոպոսը, նոյն օրը այցելեց զինուորական և հայոց եկեղեցիները, խօսեց և յորդորեց, որ հաժանքները սիրով և համերաշխ ապրին միմեանց հետ մանաւանդ այս ծանր օրերում։ Կիրակի օրը Ղարսուբանի և մի քանի այլ գիւղերի համար քահանայ ձեռնադրեց ու երկուշաբթի օրը ճանապարհ ընկաւ դէպի Թէլաւ։

Ասված սեպտեմբերի 20-ից դասերը սկսվել են տեղիս գիմնազիայի ու ուսուցչական դպրոցի, իսկ ըստ ու ձայն միակ հայոց դպրոցը մնացել է դեռ ևս փակ շնորհիւ ժողովրդի քար անտարբերութեան։ Դպրոցը հոգաբարձութիւն չունի դեռ ևս, անցեալ տարի դպրոցը կառավարել են մի քանի հոգիներ ինչպէս ուզել են, վայ այն պարապմունքին, որ ունեցել են, դպրոցը համարեա թէ ոչինչ արդիւնք չէ տուել...

Անցեալ տարվայ ուսուցիչ Բ. Այվատեանի ոճկի մնացորդը դեռ ևս չեն վճարել, հոգաբարձութիւն կոչված անձինք հեռացել են պաշտօնից ու դեռ հաշիւ չեն տուել, երեխաները թափառում են փողոցներում և ոմն ինչ հոգ. հոգաբարձուներ ընտրելու առիթով հրաւէրները մնում են անուշադիր։

Հունձը վաղուց վերջացել է. գիւղացին չը նայելով առատ բերքով լցրել է իր շտեմարանները, բայց անգթաբար գինը մինչև զամսոն բարձրացրեց մինչև 150 ր. ցորենի պուդը, գարին 50—90 ր., եգիպտացորենը 40—80 բուբլի։ Երբ այս ամենից զժգոհ գնողը հարցնում է, թէ ինչու էք այդպէս վարվում, պատասխանում են. «Մենք չենք մեղաւոր, այլ վաճառականները, որոնք բոլոր ապրանքների գինը շարունակ բարձրացնում են»։

Զաքաթալայից սկսած մինչև աւանս, այստեղից մինչև Ալազանի կամուրջը՝ ճանապարհները շատ վտանգաւոր են. օր չի լինի, որ համբաւ չը գայ, թէ ճանապարհորդները թալանված են և համ այս ինչը սպանված։ դրութիւնը կրիտիկական է։

Այստեղ և շրջակայ գիւղերում սատիկ տարածված է սպանիական ջերմախտը։

Զաքաթալայից, Սաքաթլուից և Նուխուից շրջանից կան մեզ մօտ շատ գաղթականներ, որոնք ապրում են իրանց քրտինքով, կան և որբեր 6—14 տարեկաններ, որոնք քաղցած, ոտաբոբիկ ու ցնցոտիների մէջ թափառում են փողոցներում ու եկեղեցու դռան։ Բում, բացօդեայ տեղում քաղցում են իրանց սև օրը, իսկ երբ դիմում են ուխտ դրում մի կոր հաց, դուրս են վռնտվում ասելով. «Հացը դեռ փողոցից չենք բերել և կամ դեռ չենք թխել»... Այս քաղաքաբերութիւնը ասանիս հայերի կողմից դատապարտելի է։ Եղանակները դեռ պաշտանային են, իսկ ինչ կը լինի ձմեռը ապրելիքների դրութիւնը. Ասատած գիտէ, եթէ ոչ շտապողութիւն դարձնող չը լինի։

Նորեկ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 6 նոյեմբ.

Սրանով յայտնում ենք, որ Նուխի Արէշցիների գաղթականների այն հատուածը, որ գտնվում է 8 տարեկիկ Կալդղում, խնամքիս է եղել բացառապէս Գաղթականական Գլխաւոր Խորհրդի գումարներով և որ Նուխի-Արէշցիների Հայրենակցական Միութիւնը ոչ մի կապ չէ ունեցել դրամական ծախսերի հետ, բացի Միութեանս մի քանի անդամների աջակցութեան, որ արտայայտվել է Գլխաւոր Խորհուրդը իրաւունք պահելու մեր գաղթականների դրութեան և կարիքների մասին։

Գալով Միութեանս գումարների հաշուետուութեան, որ հանում են ոչ թէ 100 հազարների, որպէս յիշված է լրագրի մի յօդուածում, որի հեղինակը հեռու լինելով Միութեանս աշխատանքներից՝ թիւրիմացութեան է մատնված, այլ նրանք՝ Թիֆլիսաբնակ նուիրիչներից ժողոված գումարները՝ չենն հասնում նոյնիսկ երեք հազարի, այդ հաշուետուութիւնը պատրաստվում է և մօտ ապագայում կը ներկայացվի վերատուչիչ յանձնաժողովին, ապա ընդհանուր ժողովին։

Բացի այդ Միութեանս երեք անդամ ենք բաշխաւորութեամբ և պատասխանատուութեամբ ստացվել է մէկ անհատից 100 հազար բուբլի որոշ նպատակով. դրա հաշուետուութիւնը այնտեղ անդամները պարտաւոր են ներկայացնել նուիրատու պարոնին։ Բայց և այնպէս Հայրենակցական Միութիւնը այդ հաշուետուութիւնը կը ներկայացնէ նաև ընդհանուր ժողովի քննութեան։

Նուխի Արէշցիների Հայրենակցական Միութիւն

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՕԼԵԳԻԱ

Հրատարակիչ՝ ԱՇՏԱՏԱԿՊՇՆԵՐԻ ԽՈՒՄԲ

«ՄՇԱԿԻ» ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Արեւմտեան ռազմաճակատի ՔԱՐՏԷԶԸ

ռուսերէն լեզուով, գունաւոր։

Գինն է 3 բուբլի։

ԼՈՒՅՍ ՏԵՍԱՆ

ԲԺԻՇԿ Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑԻ

1) Առողջապահ. Դասընթաց. 2 ր. 50 կ.
2) Малокровіе и его леченіе 25 к.
3) Легочныя заболѣванія 25 к.
4) Гигіена женщины I часть 1 р.
5) Վեներականախտեր 1 ր.

Տպագրութեան է տրված «Ազգային դարձ» պատասխանատուներ-ազգայիններ բուժումն։

Ինչպէս վերոյիշեալ նոյնպէս բոլոր ուրիշ բժշկական գրքերի համար դիմել «Գուտենբերգ» և «Գիր» գրավաճառանոցներին։

Գնահատը մեծաքանակ գնողների համար՝ Тифлисъ, Бебутовская ул. № 56. кв. Д-ра В.А. Хачатряна.

(о. д.) 823 40—19

ՀԻՊՆՕՏԻԶՄԻ և մարդկային մտքի քաջագործութեան գործնական հոգեբանութեան

ԿՈՒՐՍԵՐ

Յարութիւն Շէքերջեանի

Տալիս եմ փորձնական դասեր, դասընթաց եմ զանազան հիւանդութիւններ՝ խստերիա, ատամոքսային ներվային ցաւ, նեվրասթենիա, արբեցութիւն, ծխել և այլ վատ սովորութիւններ։ Ներշնչումն ծոյլ աշակերտներ՝ աշխատասէր լինելու համար։

Ընդունելութիւնը առաւօտեան ժամը 11—1 ը. Бебутовская № 56. Շ. Շէքերջեան։

(կ.) 916. 40—35

«Հայ Կաթոլիկոս Կուլտուրական Միութեան» վարչութիւնը յայտնում է իր անդամներին, որ ամսոյ 3-ին անդամների սակաւութեան պատճառով յայտարարված ընդհանուր ժողովը չը կայացաւ։ Այսօր, նոյեմբերի 10-ին կայանալու է երկրորդ ժողով, որը օրինաւոր է համարվում առանց ներկայ անդամների թիւն ի նկատի ունենալու։

Ժողովն սկսվելու է ուղիղ օրվայ ժամը 1-ին Միութեան հիմնած գաղթականական ճաշարանի գրասենեակում։

Ի դիմաց վարչութեան՝ նախագահ՝ ՅՈՎՀ. ՔՕՍԵԱՆ

1029. 1—1

Типографія "ЭКОНОМІЯ" Тифлисъ.